



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«17» հոկտեմբերի, 2020 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 1450-Ա/2

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱՄ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ
ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ
ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգ»-ի դրույթներով և հիմք ընդունելով «Գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության» մրցույթին ներկայացված հայտերի գնահատման մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի հոկտեմբերի 16-ի N 2 արձանագրությունը և 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշմամբ հաստատված «Պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների նոր գիտական թեմաների, այդ թվում՝ թիրախային (նպատակային) գիտական թեմաների ֆինանսավորում» ծախսային ուղղությամբ նախատեսված ծավալները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոջյանին՝
 - ա) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքները,

բ) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,

գ) ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2020 թվականի հոկտեմբեր ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին:

Նախարար

Արայիկ Հարությունյան

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱՄ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

ՑԱՆԿ

Հ/հ	Ծածկագիր	Թեմայի անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն
1	20TTCG-4A001	Պարենային անվտանգության և սննդանյութերի գնահատման գիտամեթոդական կարողությունների հզորացում	Պիպոյան Դավիթ Աշոտի	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ
2	20TTCG-1F002	Սևանա լճում ծաղկող ցիանոբակտերիաների աճող խնդիրը. մեխանիզմների, շարժիչ ուժերի և նոր գործիքների հայտնաբերում լճի մոնիթորինգի և կառավարման համար	Գևորգյան Գոռ Արտակի	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
3	20TTCG-1F003	Առնետների գլխուղեղում գերկարճ իմպուլսներով էլեկտրոնային ճառագայթմամբ հրահրված նյարդային խանգարումները	Ցականովա Գոհար Վասիլիի	«Քենդլ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամ
4	20TTCG-1F004	Խորը նեյրոնային ցանցերի ալգորիթմների կիրառումը փոքր մոլեկուլների մետաբոլիզմի և թունայնության in silico կանխատեսման նպատակով	Բաբայան Նելլի Սամվելի	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
5	20TTCG-1F006	Հայաստանի մակերևութային ջրերի և հողերի մակարոյժ նախակենդանիները՝ հետազոտության, նկարագրման և մշտադիտարկման մոտեցումները	Աղայան Սարգիս Աղասու	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ

6	20TTTCG-1E009	Երկրաէկոլոգիական հետազոտություններում երկրատարածական տվյալների մշակման գործում մեքենայական ուսուցման կիրառման կարողությունների հզորացում	Ասմարյան Շուշանիկ Գուրգենի	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ
7	20TTTCG-1C010	ARICH դետեկտորի գրանցման արդյունավետության ստուգումը և ֆրազմենտացիայի ֆունկցիաների բազմաչափ ուսումնասիրությունը Belle II միջազգային գիտափորձում, KEK, Ճապոնիա	Քառյան Գևորգ Արարատ	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
8	20TTTCG-1C011	Պիկովայրկյանային լուծողականությամբ երկրորդական էլեկտրոնների դետեկտոր Ա հիպերմիջուկների հետազոտությունների համար	Ժամկոչյան Սիմոն Վահանի	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
9	20TTTCG-3A012	Նեյրոգենեզի կենսակայունացնող դերը առողջ ուղեղի ծերացման գործընթացում	Ենկոյան Կոնստանտին Բորիսի	«Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
10	20TTTCG-5I013	Դեպի հայաստանյան գիտության միջազգայնացում. Գիտական հղման հայկական ցուցիչ	Սարգսյան Շուշանիկ Արթուրի	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ
11	20TTTCG-1C015	Բլազարների շիթեր. տվյալների վրա հիմնված ուսումնասիրություն	Սահակյան Նարեկ Վարդանի	«ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» միջազգային կազմակերպություն